

վարդապետութեան ծայրագոյն աստիճան ընդունած ըլլալու —) հետ կը պտրտէր, զանիկայ կը պաշտպանէր, Հայերը կը յանդիմանէր, որով Լեհերէն շատ պատուով կ'ընդունուէր, իշխանք զինք ճաշի կը հրաւիրէին, եւ նոյն իսկ Թագաւորին եւ Թագուհւոյն ներկայացաւ եւ մեծ պատիւ գտաւ: Եւ երբ տեսաւ՝ որ ժողովուրդը տակաւին կը յամառի, զՆիկողայոսը չ'ընդունիր, բանադրեց զանոնք, եւ յետոյ Հռոմ գնաց. Քահանայապետէն սիրով ընդունուեցաւ, հոն ի դերեւ հանեց Լեմպերկի ժողովրդեան ճիգերը, որոնք Քահանայապետին դիմած էին Նիկողայոսը հեռացընել տալու համար: Բնագիրը շատերուն մատչելի չըլլալուն եւ յինքեան կարեւոր ըլլալուն՝ այստեղ յառաջ կը բերեմ:

“

Մինչ մեք էաք ի յայս վըշտի

Ի տառապանս ազգի ազգի,

Խուլ պատրիարզն Ըստամպօյցի,

Մեր մեղքն եբեր քաղաքն Լովի.

Որ միաբան հետ Նիկօլի՝

Մտան երկուքն յեկեղեցի.

Հնազանդեցաւ Քաղկեդոնի,

Ի արար ընդ մեզ բազում տաւի.

Ի ծերութեան ժամանակի

Ընկեց զօրէնս Լուսաւորչի,

Գովէր զգործըն Նիկօլի՝

Դառնալ ի կրօնըս Ֆռանգի: